

Հավելված՝

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի խորհրդի
20.11.2019թ. թիվ 21/6-Լ որոշման



Պալատի խորհրդի նախագահ՝

Արա Չոհրաբյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԸ ԵՎ ԴՐՈՇՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կ Ա Ր Գ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ կամ Փաստաբանների պալատ**) անվանման, խորհրդանշանի և դրոշի օգտագործման հետ կապված հարաբերությունները:
2. Իրավաբանական և ֆիզիկական անձանց (այդ թվում՝ փաստաբաններին և փաստաբանական կազմակերպություններին) արգելվում է իրենց ձևաթղթերում կամ անհատականացնող այլ միջոցներում օգտագործել Փաստաբանների պալատի անվանումը (բոլոր հոլովածներով, հապավումներով և լեզուներով), խորհրդանշանը և դրոշը, բացի սույն կարգում նշված դեպքերի:
3. Պալատի խորհրդանշանը կարող են օգտագործել՝
 - փաստաբանները՝ իրենց ձևաթղթերում, այցեքարտերում կամ անհատականացնող այլ միջոցներում.
 - Պալատի հետ համագործակցող անձինք՝ Պալատի հետ համատեղ հրավերներում կամ համատեղ կազմված այլ փաստաթղթերում՝ Պալատի նախագահի համաձայնությամբ.
 - լրատվամիջոցները՝ Պալատին առնչվող տեղեկատվություն հրապարակելու կապակցությամբ.
 - Պալատի նախագահի գրավոր թույլտվությամբ նշված այլ դեպքերում:
4. Պալատի անվանումը սույն կարգի 5-րդ և 6-րդ կետերում նշված կարգով կարող են օգտագործել՝
 - մարզային համակարգողները՝ Պալատի նախագահի կողմից

թույլատրած տարածքներում՝ ցուցանակներում նշում կատարելու միջոցով, ինչպես նաև իրենց ձևաթղթերում և այցեքարտերում.

- փաստաբանները՝ իրենց ձևաթղթերում, այցեքարտերում կամ անհատականացնող այլ միջոցներում, բացառությամբ ցուցանակի:
5. Փաստաբանները և մարզային համակարգողները կարող են օգտագործել Պալատի անվանումը՝ միայն հետևյալ նշումը կատարելու միջոցով՝
- 1) փաստաբանների դեպքում՝
- **«Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի անդամ»**, կամ
 - **«ՀՀ փաստաբանների պալատի անդամ»**, կամ
 - **«Փաստաբանների պալատի անդամ»**, կամ
 - **«Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի փաստաբան»**, կամ
 - **«ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան»**, կամ
 - **«Փաստաբանների պալատի փաստաբան»**:
- 2) համակարգողի դեպքում՝
- **«Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի մարզի մարզային համակարգող»**:
6. Սույն կարգի 5-րդ կետի 1-ին ենթակետի նշումը պետք է լինի նույն տառատեսակով և ձևաչափով, և պետք է անմիջապես նախորդի փաստաբանի անվանը (անուն, ազգանուն):
7. Սույն կարգով նախատեսված Պալատի անվանման կամ խորհրդանշանի օգտագործման թույլտվությունը չի գործում, եթե փաստաբանը կամ փաստաբանական կազմակերպությունը այնպիսի պայմաններում է օգտագործում Պալատի անվանումը կամ խորհրդանշանը, որով խաթարվում է Փաստաբանների պալատի բարի համբավը: Պալատի անվանումը կամ խորհրդանշանն արգելվում է օգտագործել արտաքին և ներքին ցուցանակների վրա:
8. Սույն կարգի ընդունումը չի կարող համարվել Պալատի կողմից տրված համաձայնություն կամ թույլտվություն մինչև սույն կարգի ընդունումը Պալատի անվանումը, դրոշը կամ խորհրդանշանն օգտագործող անձանց համար:
9. Սույն կարգի խախտման փաստ արձանագրելու դեպքում, եթե ենթադրյալ խախտումը թույլ է տվել փաստաբանը կամ փաստաբանական կազմակերպությունը, Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարը կամ Պալատի նախագահի հանձնարարությամբ հանդես եկող այլ աշխատակիցը գրավոր առաջարկում է փաստաբանին կամ փաստաբանական կազմակերպությանը տասն օրյա ժամկետում վերացնել խախտումը: Սահմանված ժամկետում խախտումը չվերացնելու դեպքում, Պալատի աշխատակիցը համապատասխան դիմում է ներկայացնում Պալատի նախագահին՝ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.9.6 ենթակետի համաձայն:
10. Սույն կարգի խախտումը փաստաբանի կողմից առաջացնում է կարգապահական պատասխանատվություն «Փաստաբանության մասին»

օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.9.2 ենթակետի համաձայն:

11. Եթե սույն կարգի պահանջը խախտվել է փաստաբան չհանդիսացող ֆիզիկական անձի կամ կազմակերպության կողմից, ապա սույն կարգի 8-րդ կետում նշված աշխատակիցը ձեռնարկում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված՝ իրավունքի պաշտպանության միջոցներ:
12. Պալատի մարմինները, աշխատակազմը, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանումները անարգել օգտագործում են Պալատի անվանումը, խորհրդանշանը և դրոշը՝ իրենց լիազորությունների շրջանակում:

* * *